	Հավելված N 1 Կադաստրի կոմիտեի ղեկավարի 2026 թվականի _____ -ի N Լ հրամանի
	«Ռիելթորական գործունեության մասին» օրենք
1	Ո՞րն է «Ռիելթորական գործունեության մասին» օրենքի կարգավորման առարկան
2	Ո՞րն է «Ռիելթորական գործունեության մասին» օրենքի գործողության ոլորտը
3	«Ռիելթորական գործունեության մասին» օրենքի գործողությունը տարածվում է
4	«Ռիելթորական գործունեության մասին» օրենքի չի տարածվում
5	Արդյո՞ք «Ռիելթորական գործունեության մասին» օրենքը տարածվում է հանրության գերակա շահ ճանաչված գույքերի նկատմամբ իրականացվող գործարքների վրա
6	Արդյո՞ք «Ռիելթորական գործունեության մասին» օրենքը տարածվում է գույքի հավատարմագրային կառավարման գործարքների վրա
7	Ռիելթորական գործունեությունը՝
8	Ռիելթորական ծառայությունները՝
9	Ռիելթորական կազմակերպությունը՝
10	Ռիելթորը՝
11	Անշարժ գույքի կառավարման ծառայությունը՝
12	Անշարժ գույքի կառավարիչը՝
13	Անշարժ գույքի կառավարման կազմակերպությունը՝
14	«Ռիելթորական գործունեության մասին» օրենքի համաձայն՝ ո՞վ է հանդիսանում պատվիրատու
15	«Ռիելթորական գործունեության մասին» օրենքի համաձայն՝ ո՞վ է հանդիսանում լիազոր մարմին
16	Ռիելթորական ծառայությունների մատուցման պայմանագիրը՝
17	Ռիելթորի որակավորման վկայականը՝
18	«Ռիելթորական գործունեության մասին» օրենքի համաձայն՝ որակավորման հանձնաժողովը՝
19	Միասնական տեղեկատվական համակարգը՝
20	Էսքրոու հաշիվ՝
21	«Ռիելթորական գործունեության մասին» օրենքի համաձայն՝ մասնագիտական հանձնաժողովը՝
22	Իրական շահառու՝

23	Ռիելթորական գործունեության սուբյեկտներն են՝
24	Միասնական տեղեկատվական համակարգի օգտատերերն են՝
25	Միասնական տեղեկատվական համակարգ պարտադիր մուտքագրման ենթակա են՝
26	Ի՞նչ հիմունքներով են անշարժ գույքի սեփականատեր հանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձինք սեփականության իրավունքով իրենց պատկանող անշարժ գույքն ինքնուրույն օտարելու նպատակով մուտքագրում միասնական տեղեկատվական համակարգ օտարվող գույքի նույնականացնող տվյալները
27	Ռիելթորական գործունեությունը կազմակերպվում և իրականացվում է՝
28	Ո՞րն է ռիելթորական և անշարժ գույքի կառավարման ծառայությունների մատուցման իրավական հիմքը
29	Ռիելթորական գործունեության պայմանագիրը պետք է պարունակի հետևյալ պարտադիր տեղեկություն՝
30	Արդյո՞ք ռիելթորական գործունեության պայմանագիրը պետք է պարունակի ռիելթորական ծառայությունների վճարման կարգի վերաբերյալ պարտադիր տեղեկությունը
31	Արդյո՞ք ռիելթորական գործունեության պայմանագիրը պետք է պարունակի պայմանագրի գործողության ժամկետի վերաբերյալ պարտադիր տեղեկությունը
32	Արդյո՞ք ռիելթորական գործունեության պայմանագիրը պետք է պարունակի կողմերի իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ պարտադիր տեղեկությունը
33	Արդյո՞ք ռիելթորական գործունեության պայմանագիրը պետք է պարունակի պայմանագրի դադարեցման պայմանների վերաբերյալ պարտադիր տեղեկությունը
34	Անշարժ գույքի կառավարման մասին պայմանագրում պետք է նշվեն՝
35	Արդյո՞ք անշարժ գույքի կառավարման մասին պայմանագրում պետք է նշվեն անշարժ գույքի ապահովագրության, ինչպես նաև պատասխանատվության ապահովագրության պայմանագրի մասին, ներառյալ ապահովագրողի, ապահովագրական գումարի և ապահովագրված ռիսկերի վերաբերյալ տվյալները.
36	Արդյո՞ք անշարժ գույքի կառավարման մասին պայմանագրում պետք է նշվեն պատվիրատուի էսքրոու հաշվի վերաբերյալ տվյալները.
37	Արդյո՞ք անշարժ գույքի կառավարման մասին պայմանագրում պետք է նշվեն պայմանագրի կնքման պահին անշարժ գույքի փաստացի վիճակի նկարագրության վերաբերյալ տվյալները.

38	Արդյո՞ք անշարժ գույքի կառավարման մասին պայմանագրում պետք է նշվեն անշարժ գույքի կառավարման կազմակերպության կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող անշարժ գույքի կառավարչի անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը, լիազոր մարմնում հաշվառման համարը
39	Անշարժ գույքի կառավարման մասին պայմանագրի կնքման պահին անշարժ գույքի փաստացի վիճակի նկարագրությունը պետք է ներառի՝
40	Արդյո՞ք անշարժ գույքի կառավարման մասին պայմանագրի կնքման պահին անշարժ գույքի փաստացի վիճակի նկարագրությունը պետք է ներառի գույքային իրավունքներն ու սահմանափակումները (այդ թվում՝ իրավունքների և օգտագործման նպատմամբ)
41	Արդյո՞ք անշարժ գույքի կառավարման մասին պայմանագրի կնքման պահին անշարժ գույքի փաստացի վիճակի նկարագրությունը պետք է ներառի տեղադրությունը, դիրքը (քարտեզից հատված անշարժ գույքի գտնվելու վայրի նշումով)
42	Արդյո՞ք անշարժ գույքի կառավարման մասին պայմանագրի կնքման պահին անշարժ գույքի փաստացի վիճակի նկարագրությունը պետք է ներառի հարկայնությունը, հարկը
43	Արդյո՞ք անշարժ գույքի կառավարման մասին պայմանագրի կնքման պահին անշարժ գույքի փաստացի վիճակի նկարագրությունը պետք է ներառի օբյեկտի կառուցման, շահագործման տարեթիվը (նման տեղեկատվության առկայության դեպքում)
44	Արդյո՞ք անշարժ գույքի կառավարման մասին պայմանագրի կնքման պահին անշարժ գույքի փաստացի վիճակի նկարագրությունը պետք է ներառի առանձին կանգնած շինությունների արտաքին հարդարումը (յուրաքանչյուր կողմի համար առանձին նշելով նյութի տեսակը)
45	Արդյո՞ք անշարժ գույքի կառավարման մասին պայմանագրի կնքման պահին անշարժ գույքի փաստացի վիճակի նկարագրությունը պետք է ներառի ներքին հարդարումը (դռներ, պատուհաններ, հատակ, առաստաղ, պատեր՝ նշելով նյութի տեսակը, հողամասում առկա բոլոր առանձին կանգնած շինությունների համար՝ առանձին)
46	Ֆիզիկական անձը որպես ռիելթոր կամ անշարժ գույքի կառավարիչ հաշվառվելու նպատակով լիազոր մարմին է ներկայացնում դիմում՝ կից ներկայացնելով
47	Իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը հաշվառվելու նպատակով լիազոր մարմին են ներկայացնում դիմում՝ կից ներկայացնելով
48	Ֆիզիկական անձին (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող) որպես ռիելթոր կամ անշարժ գույքի կառավարիչ հաշվառելու դիմումը մերժվում է, եթե՝
49	Իրավաբանական անձին՝ որպես ռիելթորական կազմակերպություն կամ անշարժ գույքի կառավարման կազմակերպություն հաշվառելու դիմումը մերժվում է, եթե՝

50	Ի՞նչ դեպքերում է Լիազոր մարմնի որոշմամբ ռիելթորական, անշարժ գույքի կառավարման կազմակերպությունները հանվում են հաշվառումից
51	Ո՞ր դեպքերում է Լիազոր մարմնի որոշմամբ ռիելթորը (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող), անշարժ գույքի կառավարիչը (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող) հանվում են հաշվառումից
52	«Ռիելթորական գործունեության մասին» օրենքի իմաստով ռիելթորական ծառայություններ են համարվում՝
53	Քանի՞ տարով է տրամադրվում ռիելթորի որակավորման վկայականը
54	Ի՞նչ է անշարժ գույքի կառավարումը
55	Ի՞նչ է ներառում օրենքի շրջանակում անշարժ գույքի կառավարումը
56	Ի՞նչը կարող է հանդիսանալ անշարժ գույքի կառավարման առարկա
57	Ի՞նչ չի ներառում անշարժ գույքի կառավարումը
58	Ո՞վ է իրականացնում ռիելթորի մասնագիտական որակավորումը՝
59	Օրենքի իմաստով ռիելթորական ծառայություններ են համարվում՝
60	Ի՞նչ է իրականացվում է ռիելթորական ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա:
61	Անշարժ գույքի կառավարման կազմակերպությունը պետք է ունենա՝
62	Պատվիրատուն իրավունք ունի՝
63	Արդյո՞ք պատվիրատուն իրավունք ունի ռիելթորից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող), ռիելթորական կազմակերպությունից, անշարժ գույքի կառավարչից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող), անշարժ գույքի կառավարման կազմակերպությունից ստանալու գործարքի և դրա կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկություններ
64	Արդյո՞ք պատվիրատուն իրավունք ունի ռիելթորական, անշարժ գույքի կառավարման կազմակերպություններից կամ ռիելթորից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող), անշարժ գույքի կառավարչից (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող) պահանջելու և ստանալու գրավոր տեղեկատվություն նախատեսվող գործարքի բնույթի վերաբերյալ վերաբերյալ տեղեկություններ
65	Արդյո՞ք պատվիրատուն իրավունք ունի անշարժ գույքի կառավարման պայմանագիրը կնքելու պահից վեց ամիս լրանալուց հետո՝ ցանկացած պահի, միակողմանի լուծելու անշարժ գույքի կառավարման պայմանագիրը՝ այն լուծելու մասին ծանուցումը ներկայացնելով միասնական տեղեկատվական համակարգի միջոցով:

66	Արդյո՞ք պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանի լուծելու անշարժ գույքի կառավարման պայմանագիրը, եթե անշարժ գույքի կառավարիչը երկու և ավելի ամիս անընդմեջ կամ պայմանագրով սահմանված այլ ժամկետում չի փոխանցել պայմանագրով սահմանված վճարները.
67	Արդյո՞ք պատվիրատուն իրավունք ունի «Ռիելթորական գործունեության մասին» օրենքով սահմանված դեպքերում պահանջելու ռիելթորի (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող), ռիելթորական, անշարժ գույքի կառավարման կազմակերպությունների, անշարժ գույքի կառավարչի (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող) պատասխանատվության ապահովագրություն.
68	Ռիելթորական, անշարժ գույքի կառավարման կազմակերպությունները, ռիելթորը (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող) և անշարժ գույքի կառավարիչը (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող) իրավունք ունեն՝
69	Ռիելթորական, անշարժ գույքի կառավարման կազմակերպությունները, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր հանդիսացող ռիելթորը, անշարժ գույքի կառավարիչը պարտավոր են՝
70	Ռիելթորը, անշարժ գույքի կառավարիչը պարտավոր են՝
71	Արդյո՞ք ռիելթորը, անշարժ գույքի կառավարիչը պարտավոր են ծառայությունը մատուցել «Ռիելթորական գործունեության մասին» օրենքով, ռիելթորական գործունեության իրականացման և օրենսդրությամբ սահմանված կարգով.
72	Արդյո՞ք ռիելթորը, անշարժ գույքի կառավարիչը պարտավոր են հրաժարվել ծառայության մատուցումից, եթե պատվիրատուի կողմից տրամադրված և օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերված անհրաժեշտ տեղեկատվությունը բավարար չէ «Ռիելթորական գործունեության մասին» օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պարտադիր պահանջների պահպանմամբ ռիելթորական, անշարժ գույքի կառավարման ծառայություններ մատուցելու համար.
73	Արդյո՞ք ռիելթորը, անշարժ գույքի կառավարիչը պարտավոր են միասնական տեղեկատվական համակարգ իրենց մուտքագրած տվյալների փոփոխությունների դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում թարմացնել և ճշգրտել դրանք
74	Արդյո՞ք ռիելթորը, անշարժ գույքի կառավարիչը պարտավոր են պատվիրատուի պահանջով ներկայացնել ռիելթորի որակավորման վկայականը կամ լիազոր մարմնում հաշվառված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը.

75	Արդյո՞ք ռիելթորը, անշարժ գույքի կառավարիչը պարտավոր են չհրապարակել ծառայության մատուցման ընթացքում պատվիրատուից ստացված գաղտնի տեղեկատվությունը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերի.
76	Ռիելթորական, անշարժ գույքի կառավարման կազմակերպությունները, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր հանդիսացող անշարժ գույքի կառավարիչը պարտավոր են
77	Ռիելթորը, անշարժ գույքի կառավարիչը պարտավոր են՝
78	Ռիելթորը, անշարժ գույքի կառավարիչը պարտավոր են արդյո՞ք կատարել ռիելթորական ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված այլ պարտավորություններ:
79	Պատվիրատուն պարտավոր է արդյո՞ք ապահովել անշարժ գույքի տեղազննման հնարավորությունը
80	Արդյոք կասեցվում է ռիելթորի որակավորման վկայականի գործողությունը պետական ծառայության, համայնքային ծառայության մեջ լինելու ողջ ժամկետի ընթացքում, ինչպես նաև հանրային պաշտոնում ընտրվելու կամ նշանակվելու դեպքում՝ իր լիազորությունների ժամկետով:
81	Անշարժ գույքի կառավարման պայմանագրի ամբողջ ժամանակահատվածում անշարժ գույքն ապահովագրված լինելու դեպքում անշարժ գույքի կառավարման կազմակերպությունը, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր հանդիսացող անշարժ գույքի կառավարիչը, որպես գույքային պատասխանատվության ապահովման միջոց, պարտավոր են
82	Ռիելթորական կազմակերպությունը, ռիելթորը (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող) պարտավոր են՝
83	Ռիելթորական կազմակերպությունը պետք է ունենա՝
84	Որակավորման քննություններն ընդունում է՝
85	Որակավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ՝
86	Ռիելթորի որակավորման քննություններին կարող են մասնակցել՝
87	Ռիելթորի որակավորման վկայականի գործողությունը կասեցվում է՝՝
88	Որակավորման վկայականի գործողությունը դադարեցվում է՝
89	Ֆիզիկական անձին (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող) որպես ռիելթոր կամ անշարժ գույքի կառավարիչ հաշվառելու դիմումը մերժվում է, եթե՝
90	Իրավաբանական անձին՝ որպես ռիելթորական կազմակերպություն կամ անշարժ գույքի կառավարման կազմակերպություն հաշվառելու դիմումը մերժվում է, եթե՝
91	Ի՞նչ դեպքերում է Լիազոր մարմնի որոշմամբ ռիելթորական, անշարժ գույքի կառավարման կազմակերպությունները հանվում են հաշվառումից

92	«Հաստատված է» կարգավիճակը տրամադրվում է, եթե՝
93	Մեկ օրացուցային տարվա ընթացքում օրենքով նախատեսված պահանջները մեկից ավելի անգամ խախտելը հիմք է՝
94	Մեկ օրացուցային տարվա ընթացքում օրենքով նախատեսված պահանջը մեկ անգամ խախտելը, ընդհանուր կանոնով, հիմք է՝
95	Ռիելթորի անվան կամ ազգանվան փոփոխության դեպքում վկայականի վերաձևակերպման համար դիմելու ժամկետը՝
96	Բացառիկության ընդհանուր առավելագույն ժամկետը որքա՞ն է:
97	Միասնական համակարգում «Ստուգված է» կարգավիճակը նշանակում է, որ՝
98	Ի՞նչ դեպքերում է Լիազոր մարմնի որոշմամբ ռիելթորական, անշարժ գույքի կառավարման կազմակերպությունները հանվում են հաշվառումից
99	Ո՞ր դեպքերում է Լիազոր մարմնի որոշմամբ ռիելթորը (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող), անշարժ գույքի կառավարիչը (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող) հանվում են հաշվառումից
100	Օրենքի իմաստով ռիելթորական ծառայություններ են համարվում՝
101	Գույքային վնասը, որը պատճառվել է ռիելթորական կազմակերպությունների, ռիելթորների (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր հանդիսացող) կողմից ռիելթորական ծառայությունների մատուցման ընթացքում նրանց ոչ իրավաչափ գործողության, անգործության, իրենց պարտականությունների չկատարման կամ թերի կատարման կամ «Ռիելթորական գործունեության մասին» օրենքի, այլ իրավական ակտերի, ինչպես նաև պայմանագրի դրույթների խախտման հետևանքով՝
102	Այն վնասը, որն առաջացել է «Ռիելթորական գործունեության մասին» օրենքով սահմանված՝ անշարժ գույքի իրավական և փաստաթղթային հավուր պատշաճի (due diligence) ուսումնասիրությունը չիրականացվելու կամ ոչ պատշաճ իրականացվելու հետևանքով՝
103	Ի՞նչ ձևով պետք է կնքվի ռիելթորական ծառայությունների մատուցման պայմանագիրը:
104	Ովքե՞ր կարող են ռիելթորական կազմակերպության անունից հաստատել ծառայությունների մատուցման պայմանագիրը:
105	Ի՞նչ տեղեկություններ պետք է ներառվեն պայմանագրում ռիելթորական ծառայությունների վճարման կարգի վերաբերյալ:
106	Ինչպե՞ս պետք է պայմանագրով կարգավորվի ծառայությունների մատուցման ընթացքի մասին պատվիրատուին տեղեկությունների տրամադրումը:
107	Ի՞նչ տեղեկություններ պետք է նշվեն պայմանագրում ռիելթորական կազմակերպության պատասխանատվության ապահովագրության վերաբերյալ:

108	Ո՞ր դեպքերում կարող է ռիելթորական ծառայությունների բացառիկության ժամկետը գերազանցել օրենքով սահմանված ընդհանուր առավելագույն ժամկետը:
109	Ի՞նչ տեղեկություններ պետք է պայմանագրում նշվեն ծառայության առարկա հանդիսացող անշարժ գույքի առաջարկվող գնի վերաբերյալ:
110	Ի՞նչ լրացուցիչ հաշվառում է կատարվում անձին որպես ռիելթոր հաշվառելիս:
111	Ի՞նչ ժամկետում է լիազոր մարմինը որոշում կայացնում ռիելթորին կամ անշարժ գույքի կառավարչին հաշվառելու վերաբերյալ:
112	Ի՞նչ ժամկետում են վերադարձվում հաշվառման նպատակով ներկայացված թերի փաստաթղթերը:
113	Ինչպե՞ս է հաշվարկվում հաշվառման դիմումի ներկայացման ժամկետը, եթե թերությունները վերացնելուց հետո դիմումը ներկայացվում է կրկին:
114	Ի՞նչ պահանջներ են ներկայացվում հաշվառման դիմումը մերժելու մասին որոշման հիմնավորմանը:
115	Կարո՞ղ է հաշվառման դիմումը մերժված անձը կրկին դիմել լիազոր մարմին:
116	Ո՞ր դեպքերում է ռիելթորն իրավունք ունենում պատվիրատուից պահանջելու լրացուցիչ փաստաթղթեր:
117	Ի՞նչ պարտականություն ունի ռիելթորական կազմակերպությունը պատվիրատուի պահանջով լիազոր մարմնում հաշվառված լինելու մասին տեղեկություններ ներկայացնելու վերաբերյալ:
118	Ի՞նչ պարտականություն ունի ռիելթորը պատվիրատուից և երրորդ անձանցից ստացված տեղեկատվության գաղտնիությունն ապահովելու հարցում:
119	Ո՞ր դեպքերում կարող է ռիելթորի կողմից ստացված գաղտնի տեղեկատվությունը տրամադրվել այլ անձանց՝ առանց գաղտնիության պահանջների խախտման:
120	Ի՞նչ ժամկետում պետք է ռիելթորական կազմակերպությունն ապահովի կնքված պայմանագրերի վերաբերյալ տեղեկությունների մուտքագրումը միասնական տեղեկատվական համակարգ:
121	Ի՞նչ պարտականություններ ունեն ռիելթորական գործունեության սուբյեկտները փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի օրենսդրության պահանջների կատարման հարցում:
122	Ի՞նչ պարտականություն ունի ռիելթորական կազմակերպությունը պատվիրատուի պահանջով պատասխանատվության ապահովագրության պայմանագիրը ներկայացնելու վերաբերյալ:
123	Ի՞նչ իրավական հիմքով կարող է ռիելթորը գովազդել պատվիրատուի անշարժ գույքը:

124	Ո՞վ է ընտրում միասնական տեղեկատվական համակարգի հետ փոխգործելի անշարժ գույքի վաճառքի կայքը:
125	Ո՞վ է սահմանում միասնական տեղեկատվական համակարգի հետ փոխգործելի անշարժ գույքի վաճառքի կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները:
126	Ի՞նչ հիմքով կարող է ռիելթորը փոփոխել համակարգ մուտքագրված անշարժ գույքի օտարման գինը:
127	Ի՞նչ եղանակներով է պատվիրատուն ծանուցվում միասնական տեղեկատվական համակարգում տվյալների մուտքագրման կամ փոփոխության մասին:
128	Կարո՞ղ են պայմանագրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ սահմանել օրենքով ուղղակիորեն չնախատեսված լրացուցիչ պայմաններ:
129	Ի՞նչ պահանջներ են ներկայացվում իրավաբանական անձ հանդիսացող պատվիրատուի տվյալների արտացոլմանը ռիելթորական պայմանագրում:
130	Վնասի չափը ապահովագրական հատուցման գումարի չափից մեծ լինելու պարագայում վնասը՝ մնացած մասով, ինչպես նաև ապահովագրական հատուցում չտրամադրվելու պարագայում՝
	ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 1412-Ն ՈՐՈՇՈՒՄ
131	Ո՞ր մարմինն է իրականացնում ռիելթորի մասնագիտական որակավորումը և տրամադրում որակավորման վկայականները:
132	Ո՞րն է որակավորման քննության անցկացման նպատակը:
133	Ի՞նչ հաճախականությամբ պետք է անցկացվեն որակավորման քննությունները:
134	Ո՞վ կարող է դիմել ռիելթորի մասնագիտական որակավորում ստանալու համար:
135	Կարո՞ղ է բարձրագույն կրթություն չունեցող անձը մասնակցել որակավորման քննությանը:
136	Որտե՞ղ է հրապարակվում որակավորման քննության անցկացման մասին հայտարարությունը և ի՞նչ ժամկետում
137	Ե՞րբ կարող է որակավորման քննության անցկացման մասին հայտարարությունը հանվել Կադաստրի կոմիտեի պաշտոնական կայքից:
138	Հայտատուների մեծ քանակի դեպքում որքա՞ն ժամանակով կարող է շարունակվել քննության անցկացումը:
139	Ի՞նչ փաստաթուղթ պետք է ներկայացնի բարձրագույն կրթություն չունեցող անձը:
140	Ո՞վ է վարում որակավորման քննությանը մասնակցելու համար դիմած հայտատուների տվյալների էլեկտրոնային մատյանը:
141	Ի՞նչ տվյալներ են պարտադիր գրառվում էլեկտրոնային մատյանում:

142	Ե՞րբ են որակավորման հայտատուի տվյալները գրառվում էլեկտրոնային մատյանում:
143	Ի՞նչ է կատարվում, եթե հայտատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են:
144	Մինչև ե՞րբ կարող է հայտատուն շտկել թերությունները կամ լրացնել փաստաթղթերը:
145	Ինչպե՞ս և ե՞րբ կարող է հայտատուն հրաժարվել որակավորման քննությանը մասնակցելուց:
146	Ի՞նչ է տեղի ունենում, եթե որակավորման քննությանը մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել:
147	Ո՞ր դեպքերում է հանձնաժողովը որոշում ընդունում որակավորման քննությունը չկայացած համարելու մասին:
148	Ո՞վ է քննությունից առաջ հանձնաժողովի նախագահին ներկայացնում հայտատուների փաստաթղթերի էլեկտրոնային փաթեթները:
149	Քանի՞ հարցից է բաղկացած յուրաքանչյուր քննության համար ընտրվող հարցաշարը:
150	Քանի՞ խնդիր է ընտրվում որակավորման քննության համար:
151	Քանի՞ հարց պետք է նվազագույնը ներառի որակավորման քննությունների հարցաշարը:
152	Ո՞ր մասնագիտական բնագավառներն են ընդգրկված հարցաշարում:
153	Ի՞նչ եղանակով է անցկացվում որակավորման քննությունը:
154	Ի՞նչ փաստաթուղթ պետք է ներկայացնի մասնակիցը քննասենյակ մուտք գործելու համար:
155	Ի՞նչ առարկաներ և նյութեր է արգելվում մասնակիցներին իրենց հետ ներս բերել քննասենյակ:
156	Ո՞վ է մասնակիցներին բացատրում քննության անցկացման տեխնիկական հարցերը:
157	Ո՞ր մասնագիտական բնագավառներն են ընդգրկված հարցաշարում:
158	Արդյո՞ք հարցաշարերում ընդգրկված են անշարժ գույքի շուկայի, ռիելթորական գործունեության և անշարժ գույքի կառավարման մասնագիտական բնագավառները
159	Արդյո՞ք հարցաշարերում ընդգրկված են ֆինանսական, հարկային, անշարժ գույքի գնահատման, մարքեթինգային մասնագիտական բնագավառները
160	Ի՞նչ գործողություններ են արգելվում քննության ընթացքում:
161	Կարո՞ղ է մասնակիցը քննության ընթացքում հարցեր տալ հանձնաժողովի անդամներին՝ առաջադրանքների բովանդակության վերաբերյալ:
162	Ի՞նչ է կատարվում քննության կանոնները խախտած մասնակցի նկատմամբ:

163	Քանի՞ միավոր է տրվում յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանի համար:
164	Քանի՞ միավոր է տրվում խնդրի սխալ պատասխանի համար:
165	Որքա՞ն է քննության ընդհանուր առավելագույն միավորը:
166	Քանի՞ միավոր պետք է հավաքի մասնակիցը քննությունը հաղթահարելու համար:
167	Ի՞նչ ժամկետում է տրամադրվում հարցաթերթիկի էլեկտրոնային տարբերակը գրավոր պահանջի դեպքում:
168	Որքա՞ն ժամանակ ունի մասնակիցը քննության արդյունքները բողոքարկելու համար:
169	Ո՞ւմ է ներկայացվում քննության արդյունքների վերաբերյալ բողոքը:
170	Ի՞նչ հարցերի կամ խնդիրների վերաբերյալ կարող է մասնակիցը բողոքարկել արդյունքները:
171	Որտե՞ղ կարող է մասնակիցը բողոքարկել հանձնաժողովի որոշումը, եթե համաձայն չէ դրա հետ:
172	Ե՞րբ է հրապարակվում որակավորումն անցած մասնակիցների ցուցակը:
173	Ի՞նչն է հիմք հանդիսանում մասնակցին որակավորման վկայական տրամադրելու համար:
174	Ո՞վ է ստորագրում որակավորման վկայական տրամադրելու վերաբերյալ հրամանը:
175	Ի՞նչ ձևաչափով է տրամադրվում որակավորման վկայականը:
176	Ի՞նչ ժամկետում է վկայականն ուղարկվում մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեին:
177	Ինչպե՞ս է ստուգվում որակավորման վկայականի իսկությունը և վավերականությունը:
178	Ի՞նչ փաստաթղթեր կարող են ներառվել որակավորման քննության անցկացման փաթեթում:
179	Ո՞վքեր կարող են ներկա գտնվել որակավորման քննությանը դիտորդի կարգավիճակում:
180	Ո՞ր մարմինն է կազմակերպում և իրականացնում ռիելթորների որակավորման քննությունները:
181	Քանի՞ անձից է կազմված որակավորման հանձնաժողովը:
182	Ովքե՞ր են ներառված հանձնաժողովի անդամների կազմում
183	Ի՞նչ գիտական աստիճան պետք է ունենան բարձրագույն ուսումնական հաստատություններից առաջադրվող թեկնածուները:

184	Որքա՞ն է որակավորված ռիելթորների ներկայացուցիչների անդամության առավելագույն ժամկետը:
185	Հանձնաժողովի կազմում անդամ ընտրված հաստատության կամ որակավորված ռիելթորի թեկնածուների անդամությունը դադարում է՝
186	Արդյո՞ք հանձնաժողովի կազմում անդամ ընտրված հաստատության կամ որակավորված ռիելթորի թեկնածուների անդամությունը դադարում է որակավորված ռիելթորին համապատասխան որոշմամբ հաշվառումից հանելու դեպքում
187	Արյդո՞ք հանձնաժողովի կազմում անդամ ընտրված հաստատության կամ որակավորված ռիելթորի թեկնածուների անդամությունը դադարում է հաստատության կամ որակավորված ռիելթորի կողմից անդամությունը դադարեցնելու մասին դիմում ներկայացնելու դեպքում.
188	Արյդո՞ք հանձնաժողովի կազմում անդամ ընտրված հաստատության կամ որակավորված ռիելթորի թեկնածուների անդամությունը դադարում է համապատասխան թեկնածուի՝ հանձնաժողովի անդամ ընտրվելու չափանիշներին համապատասխանությունը դադարելու դեպքում.
189	Արյդո՞ք հանձնաժողովի կազմում անդամ ընտրված հաստատության կամ որակավորված ռիելթորի թեկնածուների անդամությունը դադարում է հաստատության գործունեությունը կամ ռիելթորի որակավորման վկայականի գործողությունը կասեցվելու կամ դադարեցվելու դեպքում.
	«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔ
190	Ո՞րն է «անշարժ գույքի պետական միասնական կադաստր» հասկացության սահմանումը
191	Ի՛նչ է իրենից ներկայացնում անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարումը
192	Ո՞րն է «անշարժ գույքի միավոր» հասկացության սահմանումը
193	Ո՞րն է «անշարժ գույքի օբյեկտ» հասկացության սահմանումը
194	Ո՞րն է «անշարժ գույքի հասցե» հասկացության սահմանումը
195	Ո՞րն է «գույք» հասկացության սահմանումը
196	Որո՞նք են գույքագրման փաստաթղթերը
197	Ո՞րն է «գրանցված իրավունքի սուբյեկտ» հասկացության սահմանումը
198	Ո՞վ է իրավատերը
199	Որո՞նք են իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթեր
200	Որո՞նք են իրավահաստատող փաստաթղթերը
201	Ի՞նչ է իրենից ներակացնում կադաստրային ծածկագիրը

202	Ի՞նչ է իրենից ներկայացնում հողամասի հատակագիծը
203	Ո՞րն է «շինության հատակագիծ» հասկացության սահմանումը
204	Ի՞նչ է իրենից ներկայացնում պետական գրանցումը
205	Ո՞րն է տարածական հաշվառումը
206	Նշվածներից ո՞րն է պետական գրանցման հիմնական սկզբունք ու խնդիր
207	Պետության կողմից գույքի նկատմամբ գրանցված իրավունքների, սահմանափակումների ճանաչումը, երաշխավորումը և պաշտպանությունը արդյո՞ք հանդիսանում է պետական գրանցման հիմնական սկզբունք ու խնդիր
208	Գույքի նկատմամբ իրավունքների, սահմանափակումների, գույքի կադաստրային գնահատման, հաշվառման տվյալների վերաբերյալ տեղեկատվական համակարգի ստեղծումը և կառավարումը արդյո՞ք հանդիսանում է պետական գրանցման հիմնական սկզբունք ու խնդիր
209	Անշարժ գույքի շուկայի կայացմանն աջակցությունը արդյո՞ք հանդիսանում է պետական գրանցման հիմնական սկզբունք ու խնդիր
210	Պետական գրանցման սուբյեկտ են համարվում
211	Ի՞նչ է ընդգրկում պետական գրանցումը
212	Գույքի տնօրինման, օգտագործման կամ տիրապետման իրավազորությունների նկատմամբ սահմանափակումների, ինչպես նաև գույքային իրավունքների իրականացման սահմանափակումների կիրառման, փոփոխման, դադարման պետական գրանցում արդյո՞ք ընդգրկում է պետական գրանցումը
213	Ո՞ր իրավունքն ունի առաջնահերթություն գույքի նկատմամբ պետական գրանցման ժամանակ
214	Ի՞նչ սկզբունքով է որոշվում պետական գրանցման առաջնահերթությունը, եթե նույն գույքի նկատմամբ ներկայացվել են իրարամերժ իրավունքներ կամ սահմանափակումներ:
215	Ինչի՞ հիման վրա է որոշվում իրարամերժ իրավունքների կամ սահմանափակումների գրանցման առաջնահերթությունը:
216	Ե՞րբ է գրանցող մարմնում մուտքագրված սահմանափակումը բացառում դրան հակասող այլ պետական գրանցումը:
217	Կարո՞ղ է գույքի նկատմամբ այլ գույքային իրավունք գրանցվել, եթե սեփականության իրավունքը դեռևս գրանցված չէ:
218	Որո՞նք են այն բացառությունները, երբ գույքային իրավունքը կարող է գրանցվել առանց սեփականության իրավունքի նախնական գրանցման:

219	Ե՞րբ չի կարող գրանցվել որևէ շենքի կամ շինության (այսուհետ՝ շինություն) նկատմամբ սեփականության իրավունքը կամ հողամասի կառուցապատման իրավունք ունեցող անձի կողմից կառուցված շինության նկատմամբ կառուցապատողի իրավունքը
220	Ինչի՞ վրա չի տարածվում իրավահաստատող փաստաթղթերի ամբողջականության պահանջը
221	Ո՞ր փաստաթղթերը պետք է ներկայացվեն շինության նկատմամբ իրավունքի պետական գրանցման համար՝ ամբողջականության պահանջը պահպանելու նպատակով:
222	Ո՞րն է համարվում սահմանափակումների պետական գրանցման համար հիմք
223	Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ սահմանափակում կիրառող վարչական մարմիններ) իրավական ակտերը, որոնց հիման վրա օրենքով նախատեսված դեպքերում և կարգով կարող է սահմանափակվել քաղաքացիների կամ իրավաբանական անձանց գույքային իրավունքների իրականացումը արդյո՞ք համարվում է սահմանափակումների պետական գրանցման համար հիմք
224	Օրենքի ուժով կիրառվող սահմանափակումների դեպքում՝ այն փաստաթղթերը, որոնք հաստատում են սահմանափակման կիրառման համար անհրաժեշտ և բավարար պայմանների առկայությունը, եթե օրենքով նման պահանջ նախատեսված է. արդյո՞ք համարվում է սահմանափակումների պետական գրանցման համար հիմք
225	Գույքի նկատմամբ իրավունքների իրականացման սահմանափակման՝ օրենքին չհակասող պայման պարունակող, գործարքների կնքման վերաբերյալ փաստաթղթերը արդյո՞ք համարվում է սահմանափակումների պետական գրանցման համար հիմք
226	Ո՞ր դեպքում է գրանցող մարմինը կասեցնում սահմանափակման պետական գրանցումը
227	Ի՞նչ ժամկետում է գրանցող մարմինը պարտավոր կասեցնել սահմանափակման պետական գրանցումը և ծանուցել իրավասու մարմնին:
228	Սահմանափակման գրանցումը չի կարող կասեցվել, եթե ներկայացված փաստաթղթերում նշված են առնվազն՝
229	Ֆիզիկական անձի իրավունքների սահմանափակման դեպքում՝ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, ծննդյան ամսաթիվը և անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը կամ սոցիալական ապահովության քարտի համարը նշված լինելու դեպքում արդյո՞ք կարող է սահմանափակման գրանցումը կասեցվել

230	Իրավաբանական անձի իրավունքների սահմանափակման դեպքում՝ իրավաբանական անձի լրիվ անվանումը նշված լինելու դեպքում արդյո՞ք կարող է սահմանափակման գրանցումը կասեցվել
231	Ֆիզիկական անձի իրավունքների սահմանափակման դեպքում ի՞նչ տվյալներ պետք է նշված լինեն ներկայացված փաստաթղթերում:
232	Իրավաբանական անձի իրավունքների սահմանափակման դեպքում ի՞նչ տվյալ պետք է նշված լինի ներկայացված փաստաթղթերում:
233	Ո՞ր դեպքում է վերսկսվում սահմանափակման պետական գրանցման կասեցված վարույթը:
234	Ի՞նչ է անում գրանցող մարմինը, եթե սահմանափակման գրանցումը կասեցնելու հիմքեր չկան:
235	Ի՞նչ հիմքերով է իրականացվում սահմանափակման դադարման պետական գրանցումը:
236	Ի՞նչ կարգով են տրամադրվում պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող կադաստրային տեղեկությունները:
237	Ո՞ր կարգով է տրամադրվում պետական քարտեզագրագեոդեզիական ֆոնդի տեղեկատվությունը:
238	Ի՞նչ տեղեկություններ չեն համարվում ֆիզիկական անձանց անձնական կամ ընտանեկան, ինչպես նաև իրավաբանական անձանց առևտրային գաղտնիք:
239	Հողամասի և շինությունների կադաստրային արժեքի (զուտ եկամտի) և դրա հաշվարկման համար հիմք հանդիսացող տվյալները արդյո՞ք համարվում են ֆիզիկական անձանց անձնական կամ ընտանեկան, ինչպես նաև իրավաբանական անձանց առևտրային գաղտնիք:
240	Ո՞ւմ կարող են տրամադրվել իրավական կադաստրի տեղեկատվության փաստաթղթերի պատճենները կամ քաղվածքները:
241	Հարցվող անշարժ գույքի միավորի կամ օբյեկտի նկատմամբ հարցման պահին սեփականատեր հանդիսացող անձանց կամ նրանց համաձայնությամբ՝ այլ անձանց կարո՞ղ են տրամադրվել իրավական կադաստրի տեղեկատվության փաստաթղթերի պատճենները կամ քաղվածքները:
242	Գործարքների կամ դրանց առանձին պայմանների վերաբերյալ տեղեկությունները՝ այդ գործարքների կողմերին կամ նրանց համաձայնությամբ՝ այլ անձանց: կարո՞ղ են տրամադրվել իրավական կադաստրի տեղեկատվության փաստաթղթերի պատճենները կամ քաղվածքները:

243	ֆիզիկական կամ իրավաբանական անձին պատկանող, այդ թվում՝ տվյալ անձի անվամբ գրանցված կամ գույքագրված գույքի կամ գույքային իրավունքների կազմի կամ որևէ տարածքում նման գույքի կամ գույքային իրավունքների առկայության վերաբերյալ տեղեկությունները՝ այդ իրավունքների իրավատերերին, գրանցված իրավունքների դեպքում՝ գրանցված իրավունքների սուբյեկտներին կամ նրանց համաձայնությամբ՝ այլ անձանց կարո՞ղ են տրամադրվել իրավական կադաստրի տեղեկատվության փաստաթղթերի պատճենները կամ քաղվածքները:
244	Ո՞րն է պետական գրանցման արդյունքում ստեղծվող հիմնական փաստաթուղթ՝
245	Կադաստրային քարտեզը (հատակագիծը) արդյո՞ք հանդիսանում է պետական գրանցման արդյունքում ստեղծվող հիմնական փաստաթուղթ՝
246	Անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի համար կազմված կադաստրային գործը (այսուհետ՝ կադաստրային գործ) արդյո՞ք հանդիսանում է պետական գրանցման արդյունքում ստեղծվող հիմնական փաստաթուղթ՝
247	Ի՞նչ է գրանցման մատյանը:
248	Ի՞նչ տեղեկություններ են ընդգրկվում անշարժ գույքի միավորը նույնականացնող տեղեկությունների խմբում:
249	Ի՞նչ տեղեկություններ են ընդգրկվում անշարժ գույքի միավորի կամ դրա որևէ մասի նկատմամբ իրավունքների գրանցման վերաբերյալ տեղեկությունների խմբում:
250	Սահմանափակումների և նախնական նշման վերաբերյալ տեղեկությունների խմբում արդյո՞ք ընդգրկված են սահմանափակման դեպքում՝ գրանցվող սահմանափակման տեսակը և բնույթը, առկայության դեպքում՝ ժամկետը, կիրառողը, սահմանափակման պետական գրանցման համար հիմք հանդիսացած փաստաթղթի անվանումը և այլ վավերապայմաններ,
251	Ի՞նչ տեղեկություններ են ընդգրկվում սահմանափակումների և նախնական նշման վերաբերյալ տեղեկությունների խմբում
252	Կառուցվող բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքի դեպքում ո՞ր օբյեկտը կարող է լինել նախնական նշման առարկա:
253	Ի՞նչ են ընդգրկում գրանցման մատյանի լրացուցիչ տեղեկությունները:
254	Ո՞ր դեպքում է պետական գրանցումն իրականացվում թղթային մատյանում:
255	Ի՞նչ ժամկետում պետք է թղթային մատյանի տվյալները տեղափոխվեն էլեկտրոնային մատյան:
256	Ո՞վ է սահմանում գրանցման մատյանի ձևը և դրա լրացման կարգը:
257	Ի՞նչ է կադաստրային քարտեզը (հատակագիծը):

258	Ի՞նչ տեղեկություններ են ներառվում կադաստրային քարտեզի տեղեկատվության բազային շերտում:
259	Ի՞նչ տեղեկություններ են ներառվում կադաստրային քարտեզի տեղեկատվության թեմատիկ շերտում:
260	Ո՞ր կոորդինատային համակարգին պետք է կապակցված լինեն կադաստրային քարտեզում նշված շրջադարձային (բեկման) կետերի կոորդինատները:
261	Ո՞վ է սահմանում անշարժ գույքի կադաստրային ծածկագրման և կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը
262	Ինչպե՞ս են որոշվում անշարժ գույքի միավորի (հողամասի) սահմանները
263	Ի՞նչն է հիմք հանդիսանում տեղանքում հողամասի սահմանները սահմանանիշերով ամրացնելու համար
264	Ո՞վ է սահմանում սահմանների որոշման եղանակը, դրանց ճշտության նկատմամբ տեխնիկական պահանջները, սահմանանիշերի ձևերը
265	Ի՞նչ փաստաթղթեր են պահպանվում կադաստրային գործում:
266	Ի՞նչ փաստաթղթերի հիման վրա է կազմվում կադաստրային գործը:
267	Անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի համար քանի՞ կադաստրային գործ է կազմվում:
268	Որքա՞ն ժամանակ են պահպանվում կադաստրային գործի փաստաթղթերը
269	Ինչպե՞ս են պահվում կադաստրային գործի փաստաթղթերը թղթային տարբերակով ներկայացնելու կամ կազմելու դեպքում
270	Ինչպե՞ս են պահվում կադաստրային գործի փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու կամ կազմելու դեպքում
271	Ո՞վ է իրականացնում անշարժ գույքի պետական ռեգիստրի կառուցվածքային ստորաբաժանումներումպետական գրանցումը, դրա կասեցումը, դադարեցումը կամ մերժումը:
272	Ո՞վ է սահմանում պետական գրանցում կատարելու լիազորություն ունեցող պաշտոնների ցանկը:
273	Ո՞ր անձանց անվամբ գույքի նկատմամբ իրավունքներ գրանցելն արգելվում է պետական գրանցում կատարելու լիազորություն ունեցող պաշտոնատար անձին:
274	Ի՞նչն է հանդիսանում իրավունքի պետական գրանցման վարույթի հարուցման հիմքը:
275	Ի՞նչն է բավարար գույքի նկատմամբ ընդհանուր սեփականության իրավունքի պետական գրանցման վարույթի հարուցման համար

276	Ե՞րբ պետք է ներկայացվեն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագմանը, փոփոխմանը, փոխանցմանն ուղղված գործարքներից (բացառությամբ միակողմ գործարքների) ծագող իրավունքների պետական գրանցման դիմումները
277	Քանի՞ օրինակով են ներկայացվում պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը:
278	Պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինը դիմումի հիման վրա հարգելի է համարում ժամկետը բաց թողնելը, եթե՝
279	Եթե պետական գրանցման դիմումը նշված ժամկետում ներկայացնելու համար արգելք է հանդիսացել դիմողի այնպիսի հիվանդությունը, որը խոչընդոտել է նրա իրավունքի իրացմանը արդյո՞ք պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինը դիմումի հիման վրա հարգելի է համարում ժամկետը բաց թողնելը
280	Եթե պետական գրանցման դիմումը նշված ժամկետում ներկայացնելու համար արգելք է հանդիսացել դիմողի՝ զինված ուժերի կազմում ռազմական գործողություններին կամ մարտական առաջադրանքների կամ այլ ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու հանգամանքը արդյո՞ք պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինը դիմումի հիման վրա հարգելի է համարում ժամկետը բաց թողնելը
281	Եթե գործարքի կողմը գործարքը կնքելուց հետո ճանաչվել է անգործունակ, և ժամկետի վերականգնման համար դիմել է օրենքով սահմանված կարգով նշանակված խնամակալը արդյո՞ք պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինը դիմումի հիման վրա հարգելի է համարում ժամկետը բաց թողնելը
282	Եթե գործարքի կողմը մահացել է, և ժամկետի վերականգնման համար դիմել է իրավահաջորդը արդյո՞ք պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինը դիմումի հիման վրա հարգելի է համարում ժամկետը բաց թողնելը
283	Եթե պետական գրանցման դիմումը նշված ժամկետում ներկայացնելու համար արգելք է հանդիսացել գործարքի կողմին անհայտ բացակայող ճանաչելու հիմքի ի հայտ գալը, և անհայտ բացակայող ճանաչվելուց հետո ժամկետի վերականգնման համար դիմել է նրա գույքի հավատարմագրային կառավարիչը արդյո՞ք պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինը դիմումի հիման վրա հարգելի է համարում ժամկետը բաց թողնելը
284	Եթե մահացել են անչափահաս քաղաքացու օրինական ներկայացուցիչները, և նա չի ունեցել օրենքով սահմանված կարգով նշանակված խնամակալ կամ հոգաբարձու արդյո՞ք պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինը դիմումի հիման վրա հարգելի է համարում ժամկետը բաց թողնելը
285	Ի՞նչ հետևանք է առաջացնում գործարքից ծագող իրավունքները 30 աշխատանքային օրվա ընթացքում պետական գրանցման չներկայացնելը:

286	Ո՞վ կարող է ներկայացնել գործարքից ծագող իրավունքների պետական գրանցման դիմումը:
287	Ինչպե՞ս է ստուգվում պետական գրանցման դիմողի ինքնությունը:
288	Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար պետք է ներկայացվի նաև գրանցվող հողամասի հատակագիծը, եթե՝
289	Արդյո՞ք գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար պետք է ներկայացվի նաև գրանցվող հողամասի հատակագիծը, եթե՝ կատարվելու է 1998 թվականի մարտի 1-ից հետո գրանցված հողամասի սահմանների փոփոխության (բաժանման, միավորման կամ ուղղման), բացառությամբ գրանցված հողամասերի սահմանների միավորման, պետական գրանցում
290	Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար պետք է ներկայացվի նաև շինության հատակագիծը, եթե՝
291	Արդյո՞ք գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար պետք է ներկայացվի նաև շինության հատակագիծը, եթե՝ կատարվելու է նոր ստեղծված (կառուցված) շինությունների նկատմամբ իրավունքների պետական գրանցում կամ գրանցված շինությունների վերակառուցման, բաժանման, ինչպես նաև այլ հիմքերով շինությունների մակերեսների փոփոխության պետական գրանցում.
292	Գույքի, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի, սեփականության կամ հողամասի կառուցապատման իրավունքների պետական գրանցման համար պետք է ներկայացվի նաև անշարժ գույքի հասցե տրամադրելու մասին իրավասու մարմնի որոշումը, եթե՝
293	Արդյո՞ք գույքի, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի, սեփականության կամ հողամասի կառուցապատման իրավունքների պետական գրանցման համար պետք է ներկայացվի նաև անշարժ գույքի հասցե տրամադրելու մասին իրավասու մարմնի որոշումը, եթե՝ ներկայացվում է անշարժ գույքերի միավորման կամ անշարժ գույքի միավորների բաժանման գրանցման դիմում, բացառությամբ սույն օրենքի 46-րդ հոդվածով սահմանված դեպքերի:
294	Ո՞վ է կրում Կառավարության լիազորած օպերատորների կողմից անշարժ գույքի պետական գրանցման ավտոմատացված համակարգ մուտքագրված փաստաթղթերի էլեկտրոնային պատճենների և այդ փաստաթղթերի բնօրինակների համապատասխանության ապահովման պարտականությունը
295	Ե՛րբ են համարվում գույքի նկատմամբ իրավունքները և սահմանափակումները գրանցված
296	Ի՞նչ է նշվում անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականում

297	Անշարժ գույքի միավորի հասցեն, իսկ գյուղատնտեսական նշանակության հողամասերի դեպքում՝ համայնքի (առկայության դեպքում՝ նաև տեղանքի) անվանումը արդյո՞ք նշվում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականում
298	Պետական գրանցման համար հիմք հանդիսացած իրավահաստատող փաստաթղթերը արդյո՞ք նշվում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականում
299	Ո՛վ ունի իրավունք անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տվյալների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով դիմելու գրանցումն իրականացնող լիազոր մարմնին
300	Գրանցումն իրականացնող լիազոր մարմինը մերժում է տեղեկատվության տրամադրումը միայն այն դեպքերում, եթե՝
301	Ո՞ր դեպքում է գրանցող մարմինը մերժում տեղեկատվության տրամադրումը:
302	Ի՞նչ ձևերով կարող է տրամադրվել գույքի և դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվությունը:
303	Ի՞նչ տեղեկություններ պետք է ներառվեն միասնական տեղեկանքում:
304	Ո՞ր ժամանակահատվածից հետո գրանցված իրավունքների վերաբերյալ է տրամադրվում միասնական տեղեկանք:
305	Որքա՞ն է միասնական տեղեկանքի գործողության ժամկետը:
306	Ո՞վ է հաստատում միասնական տեղեկանքի ձևը:
307	Ո՞ր դեպքերում կարող են տրամադրվել կադաստրային գործի փաստաթղթերի իսկական օրինակները:
308	Ի՞նչ եղանակով կարող է տրամադրվել կադաստրային տեղեկատվությունը համապատասխան համակարգչային ծրագրային ապահովման առկայության դեպքում:
309	Ի՞նչ ժամկետում է տրամադրվում որոշակիորեն նույնականացված (միանշանակ որոշված) անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվությունը:
310	Ե՞րբ է անշարժ գույքի միավորը համարվում նույնականացված:
311	Ի՞նչ տվյալներ են անհրաժեշտ անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրման դիմումում ֆիզիկական անձին նույնականացնելու համար:
312	Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրման դիմումում ֆիզիկական անձին նույնականացնելու համար արդյո՞ք անհրաժեշտ է ֆիզիկական անձի անձը հաստատող փաստաթղթի անվանումը և համարը

313	Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրման դիմումում ֆիզիկական անձին նույնականացնելու համար արդյո՞ք անհրաժեշտ է ֆիզիկական անձի հանրային ծառայությունների համարանիշը
314	Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրման դիմումում ֆիզիկական անձին նույնականացնելու համար արդյո՞ք անհրաժեշտ է իրավաբանական անձի անվանումը, իրավաբանական անձի պետական գրանցման փաստաթղթերում առկայության դեպքում՝ իրավաբանական անձի գրանցման համարը կամ հարկ վճարողի հաշվառման համարը:
315	Ի՞նչ հետևանք է առաջացնում անձի կամ անշարժ գույքի միավորի չնույնականացված լինելը:
316	Ո՞վ կարող է սահմանել անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրման ավելի սեղմ ժամկետներ:
317	Ի՞նչ հիմքերով է կատարվում պետական գրանցման ժամանակ թույլ տրված սխալների ուղղումը:
318	Ի՞նչ է տեխնիկական բնույթի սխալը:
319	Ո՞վ կարող է նախաձեռնել տեխնիկական բնույթի սխալի ուղղում
320	Ի՞նչ է ոչ տեխնիկական բնույթի սխալը:
321	Ո՞ր ոչ տեխնիկական սխալները կարող են ուղղվել առանց իրավունքի սուբյեկտի համաձայնության:
322	Ի՞նչ հիմքով է ուղղվում սխալը, եթե պետական գրանցումը կատարվել է իրավասու մարմնի տված փաստաթղթի հիման վրա:
323	Ի՞նչ գործողություն է կատարում գրանցող մարմինը ոչ տեխնիկական բնույթի սխալ հայտնաբերելու դեպքում:
324	Ի՞նչ հիմքով կարող են ոչ տեխնիկական բնույթի սխալները ուղղվել առանց գրանցված իրավունքի սուբյեկտի համաձայնության:
325	Ինչպե՞ս է իրականացվում իրավունքի դադարման պետական գրանցումը:
326	Ե՞րբ է գույքի կամ դրա օրենքով սահմանված մասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը համարվում ուժը կորցրած:
327	Ո՞ր դեպքում է սեփականության իրավունքի պետական գրանցումը դադարեցվում առանց նոր սեփականության իրավունքի պետական գրանցման:
328	Պետական գրանցման ժամանակ թույլ տրված սխալի ուղղման դեպքում՝ գրանցված իրավունք ունեցող սուբյեկտի դիմումի և իրավասու մարմնի կողմից համապատասխան ուղղումը կատարելու մասին գրության հիման վրա արդյո՞ք սեփականության իրավունքի պետական գրանցումը դադարեցվում է առանց նոր սեփականության իրավունքի պետական գրանցման:

329	Գրանցված իրավունք ունեցող սուբյեկտի սեփականության իրավունքը դադարեցնող դատական ակտի հիման վրա՝ շահագրգիռ անձի կամ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմնի ներկայացմամբ արդյո՞ք սեփականության իրավունքի պետական գրանցումը դադարեցվում է առանց նոր սեփականության իրավունքի պետական գրանցման:
330	Կարո՞ղ է նոր հասցեի կամ հասցեի փոփոխության գրանցումն իրականացվել առանձին՝ առանց իրավունքի պետական գրանցման:
331	Ինչպե՞ս է կատարվում հասցեի փոփոխության գրանցումը գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման միասնական մատյանում:
332	Ո՞վ իրավունք ունի բաժանել սեփականության իրավունքով իրենց պատկանող անշարժ գույքի միավորներն առանձին միավորների կամ միավորել դրանք անշարժ գույքի այլ միավորների հետ:
333	Ի՞նչ հիմքով է իրականացվում պետական գրանցման նույն սուբյեկտին պատկանող մեկից ավելի անշարժ գույքի միավորների սահմանների միավորման պետական գրանցումը
334	Ինչպե՞ս է իրականացվում բաժանվող անշարժ գույքի միավորի և բաժանումից առաջացող նոր անշարժ գույքի միավորների սեփականության սուբյեկտի, սեփականության ձևի կամ ընդհանուր սեփականության իրավունքում բաժնեմասերի փոփոխում առաջացնող անշարժ գույքի միավորի բաժանման պետական գրանցումը
335	Ինչպե՞ս կարող է իրականացվել անշարժ գույքի միավորի բաժանման պետական գրանցումը
336	Ինչպե՞ս է գրանցվում հողամասերի ընդլայնման նպատակով պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման դեպքերում օտարվող և ընդլայնվող հողամասերը
337	Ե՞րբ կարող է մերժվել անշարժ գույքի միավորների սահմանների միավորման կամ բաժանման պետական գրանցումը
338	Ինչպե՞ս է իրականացվում անշարժ գույքի օբյեկտների նկատմամբ իրավունքների պետական գրանցումն
339	Ո՞վ է սահմանում անշարժ գույքի օբյեկտների առանձին տեսակների նկատմամբ իրավունքների պետական գրանցման առանձնահատկությունները, պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման ժամկետները
340	Ո՞ր դեպքերում է համայնքի սեփականության իրավունքը գրանցվում առանց իրավաբանական անձի իրավունքի նախնական պետական գրանցման:

341	Պետական սեփականություն հանդիսացող՝ ջրային, էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտները, կառույցները, դրանցով զբաղեցված հողերը համայնքին սեփականության իրավունքով փոխանցելու նպատակով իրավաբանական անձին օտարելու գործարքի և տվյալ իրավաբանական անձի կողմից իր իրավունքը համայնքին սեփականության իրավունքով փոխանցելու գործարքի հիման վրա արդյո՞ք պետության սեփականության իրավունքը գրանցվում առանց իրավաբանական անձի իրավունքի նախնական պետական գրանցման:
342	Ի՞նչ ժամկետում է անշարժ գույքի պետական ռեգիստրը համաձայնեցված ավտոմոբիլային ճանապարհի նախագիծը ստանալուց հետո, միջոցներ ձեռնարկում համապատասխան ավտոմոբիլային ճանապարհի և դրա օտարման շերտի նկատմամբ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքի պետական գրանցման ուղղությամբ:
343	Ու՞մ նախաձեռնությամբ է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և դրանց զբաղեցրած և պատմականորեն ու գործառնական առումով դրանց հետ կապված և սահմանված կարգով առանձնացված հողատարածքը (այսուհետ՝ հուշարձանի տարածք) և պահպանական գոտին տարածական հաշվառման ենթարկվում
344	Ո՞վ է ճանաչում պայմանագրերի կողմերի ստորագրությունների իսկությունը:
345	Ի՞նչ է ներառում ստորագրությունների իսկության ճանաչումը:
346	Ի՞նչ չի ներառում ստորագրությունների իսկության ճանաչումը:
347	Որտե՞ղ և ու՞մ ներկայությամբ պետք է ստորագրվի պայմանագիրը ստորագրությունների իսկությունը ճանաչելու նպատակով:
348	Ի՞նչ փաստաթղթեր պետք է ներկայացվեն ստորագրությունների իսկության ճանաչման համար:
349	Ե՞րբ է ստորագրությունների իսկությունը համարվում ճանաչված:
350	Ի՞նչ պահանջների պետք է համապատասխանի ստորագրությունների իսկության ճանաչման նպատակով ներկայացվող պայմանագիրը, դրանց հավելվածները կամ անբաժանելի մաս կազմող այլ փաստաթղթերը:
351	Ինչպե՞ս պետք է ձևակերպված լինի ստորագրությունների իսկության ճանաչման նպատակով ներկայացվող պայմանագիրը, դրանց հավելվածները կամ անբաժանելի մաս կազմող այլ փաստաթղթերի տեքստը:
352	Ի՞նչ պահանջներ են սահմանվում մեկից ավելի թերթերից կազմված իսկության ճանաչման նպատակով ներկայացվող պայմանագիրը, դրանց հավելվածները կամ անբաժանելի մաս կազմող այլ փաստաթղթերի նկատմամբ:

353	Ո՞ր դեպքում ստորագրության իսկության ճանաչման համար ներկայացված պայմանագրերը իրավունքների կամ սահմանափակումների պետական գրանցման համար չեն ընդունվում, և ստորագրությունների իսկությունը ճանաչված չի համարվում
354	Ո՞ր դեպքում ստորագրության իսկության ճանաչման համար ներկայացված պայմանագրերը իրավունքների կամ սահմանափակումների պետական գրանցման համար չեն ընդունվում, և ստորագրությունների իսկությունը ճանաչված չի համարվում
355	Ի՞նչ ժամկետում է կատարվում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագման, փոփոխման կամ փոխանցման պետական գրանցումը:
356	Կարո՞ղ է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագման, փոփոխման, փոխանցման պետական գրանցումը կատարվել արագացված կարգով,
357	Ի՞նչ գործակից է կիրառվում, եթե պետական գրանցումն իրականացվում է 3-րդ աշխատանքային օրը:
358	Ի՞նչ գործակից է կիրառվում, եթե պետական գրանցումն իրականացվում է 2-րդ աշխատանքային օրը:
359	Ի՞նչ գործակից է կիրառվում, եթե պետական գրանցումն իրականացվում է դիմումը ներկայացնելու օրը՝ երկու ժամվա ընթացքում:
360	Ի՞նչ ժամկետում է կատարվում իրավունքի դադարման պետական գրանցումը:
361	Ի՞նչ ժամկետում է կատարվում նոր հասցեի կամ հասցեի փոփոխության առանձին գրանցումը և դրա հիմքով նոր գրանցման վկայականի տրամադրումը
362	Ի՞նչ ժամկետում է կատարվում անվանափոխության վերաբերյալ գրառումը և դրա հիմքով նոր գրանցման վկայականի տրամադրումը
363	Ի՞նչ ժամկետում է կատարվում պետական գրանցման կամ տեղեկատվության տրամադրման ժամանակ թույլ տրված սխալի ուղղումը, և դրա հիմքով նոր գրանցման վկայականի կամ տեղեկատվության տրամադրումը
364	Ո՞ր դեպքերում չեն գանձվում գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վճարներ:
365	Ի՞նչ չափով են գանձվում պետական գրանցման և տեղեկատվության տրամադրման վճարները սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերում գտնվող անշարժ գույքի համար:
366	Ովքե՞ր են ազատված սահմանափակման պետական գրանցման վճարից
367	Հանրապետության նախագահի աշխատակազմին անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկատվությունը տրամադրվում անվճար:
368	Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկատվությունը մարզպետարանների տրամադրվու՞մ է անվճար:

369	Անշարժ գույքի պետական միասնական կադաստրի տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին տրամադրվու՞մ է անվճար:
370	ՈՒ՞մ է անվճար տրամադրվում կադաստրային և տեղագրական քարտեզների բազային և թեմատիկ տեղեկատվությունը՝ վեկտորային ֆորմատով, օրթոֆոտոհատակագծերը
	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ
371	Ո՞վ է ձեռք բերում իր կողմից անձի կողմից իր համար պատրաստած կամ ստեղծված նոր գույքի նկատմամբ սեփականության իրավունքը:
372	Ինչպե՞ս է քաղաքացու մահվան դեպքում սեփականության իրավունքն անցնում այլ անձանց:
373	Ի՞նչ է տեղի ունենում սեփականության իրավունքի հետ իրավաբանական անձի վերակազմակերպման դեպքում:
374	Ո՞ր դեպքերում կարող է անձը ձեռք բերել սեփականատեր չունեցող գույքի նկատմամբ սեփականության իրավունք:
375	Ե՞րբ է կոոպերատիվի անդամը ձեռք բերում բնակարանի, ավտոտնակի կամ այլ շինության նկատմամբ սեփականության իրավունք:
376	Ե՞րբ է ծագում նոր ստեղծված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը:
377	Ե՞րբ է պայմանագրով գույքը ձեռք բերողի սեփականության իրավունքը ծագում:
378	Ե՞րբ է ծագում ձեռք բերողի սեփականության իրավունքը, երբ գույքի նկատմամբ իրավունքը ենթակա է պետական գրանցման
379	Ո՞րն է տիրազուրկ գույքը:
380	Ո՞ր նորմը չի կիրառվում ինքնակամ կառույց հանդիսացող անշարժ գույքի նկատմամբ:
381	Ինչպե՞ս կարող է ձեռք բերվել տիրազուրկ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը:
382	Ո՞ր օրենսգիրքն է սահմանում տիրազուրկ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու հիմքերն ու կարգը
383	Ի՞նչ է ձեռքբերման վաղեմությունը:
384	Տիրապետման վաղեմությունը վկայակոչող անձը կարո՞ղ է իր տիրապետման ժամկետին միացնել այն ժամանակը, որի ընթացքում այդ գույքին տիրապետել է այն անձը, որի իրավահաջորդն է ինքը:
